

9213

2262.

2262

известия горского

и магдебургской:

ЧЕЛЯБЬ СЛУЧАЙХЪ

ча.

1 р., съ перес. 1 р. 15 к.  
Гернера. Сло хромоли-  
Шрейбера. Приложение:  
Словарь, Грамматикъ, Уда-  
чникъ, Альманахъ, Печатной  
журналъ. Всѧ въ чистаго,  
безъ пятенъ и дырокъ.

40.



Ա Զ Դ

9213

Սուրբ Վանքիս վարժարանը՝ որ մինչեւ հիմայ միայն ժառանգաւոր աշակերտաց յատկացեալ էր, այսուհետեւ թոշակ վճարող աշակերտաց համար ալ բացուած կհամարուի : Այն կարծիքը թէ աշխարհականի կրթութիւն եկեղեցականի կրթութեան չնմանելով՝ երկու վիճակի համար որոշուած աշակերտներ միամնաբար չեն կը ընար դաստիարակուիլ սխալ եւ անհմն է ողջմատոթեամբ մոածովն աչքին . որովհետեւ Եւրոպացի զեղիս բարուց տէր աշխարհականներ՝ նոյն աշխարհի մոլեռանդ կղերականներու կամ երկու հակադրական միապէս գարշեի ծայրերը իրարու հետ չկրնալ համեմատուելու դէպէն մոած է այդ կարծիքը . ապա թէ ոչ մարդը, մոածելով միշտ քրիստոնեայ կամ աւետարանի աշակերտ անխտիր մէկ դաստիարակութեան ներքեւ է, սլարտքի եւ իրաւունքի կողմանէ ամենքն ալ հաւասար են եկեղեցւոյ եւ աւետարանի օրինաց առջեւ . Մանաւանդ մեր ազգային եկեղեցւոյ պէս ամեն յաւելուածոյ նորաձեւութենէ անազա մնացած եկեղեցւոյ զաւկներ մէկ դաստիարակութեան ներքեւ ժողովելն ամենէն պատշաճ կերպն է : Այս պատշաճագոյն ընտրեցանք մենք : Գիտնալ պէտք է՝ որ թոշակաւոր աշակերտ յաւելցունելը գպրոցին բնութեան ապրելութիւն բնաւ պիտի չքերէ . թոշակ վճարող աշակերտները նոյն ուսումն եւ խնամք կրվայելեն ինչ որ ժառանգաւորք կվայելեն, ասոնց ծնողքներն ալ թոշակ վճարելնուն համար բնաւ ազդեցութիւն եւ կարծիք չունին գպրոցին վրայ՝ ինչպէս չունին ժառանգաւորաց ծնողքները :

Այս գպրոցին մէջ զայտի աւանդուին

1. Պւսումն հաւաստոյ ըստ վարդապետութեան հայաստանեայց կաթողիկէ եկեղեցւոյ

- մինչեւ բանասիրութեան տեսակները :
3. Գաղղիերէն .
  4. Տաճկերէն .
  5. Պատմութիւն սրբազան . ազգային եւ ընդհանուր
  6. Պատմական հմտութիւն եւրոպայի քաղաքականութեան .
  7. Քաղաքական տնտեսութիւն .
  8. Երկրագործութիւն .
  9. Աշխարհագրութիւն . բնական . ուսումնական . քաղաքական
  10. Թուաբանութիւն .
  11. Գրահաշիւ .
  12. Երկրաչափութիւն .
  13. Տոմարակալութիւն .
  14. Գծագրութիւն .
  15. Նկարչութիւն .
  16. Բնագիտութիւն ,
  17. Փիլիսոփայութեան Հոգեբանութիւն  
 « Տրամաբանութիւն  
 « Բարոյագիտութիւն  
 « Աստուածաբանութիւն  
 « Պատմութիւն :
18. Եկեղեցական երաժշտութիւն :



## ՊԱՅՄԱՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

### ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՐԱԴՐԱՆՑ

Ա. Անձնական հանդամանաց կողմանէ ընդունելութեան պայման է տարիքը , որ 13 էն վար եւ 15 էն վեր պիտի չըլլայ , սրամտութիւնը , բարեկազմութիւնն ու առողջութիւնը , այլ եւ պէտք է որ հասարակ ընթերցանութեան և գրի մէջ վարժ ըլլայ բաւական :

Բ. Ասոնց ծնողք կամ խնամակալք գիր պիտի տան սուրբ Ուխտիս վանահօր անուան . թէ մինչեւ վեց տարի դպրոցին մէջ ազային կամաց վրայ ազգեցութիւն պիտի չբանեցունեն .

Գ. Առժամանակեայ կերպով ասոնց հայրենիք երթալը արդիլեալ է գլխովին :

Դ. Ծնողք եթէ իրենց զաւկներն վեց տարիէն առաջ դպրոցէն առնել ուղեն՝ իւրաքանչիւր տարւոյ համար երեւ սուն հատ օսմանեան ոսկի պիտի վճարեն :

Ե. Տարածական կամ անբուժելի ախտ ունեցող եւ կամ բարուց եւ մտաց կողմանէ անյարմար դատուած աշակերտը կճամբուի երբ ալ ըլլայ :

Զ. Սուրբ Ուխտիս վանահայրը վանքին Քողմէն պիտի վճարէ իւրաքանչիւր ժառանդաւորի համար քսան ոսկի օսմանեան . ասկէ զատ ուրիշ ծախք չճանչնար :



## ԹՈՇԾԿԱԽՈՐԲ

Ա. Ասոնց թիւն եւ հասակը անորոշ է , իւրաքանչիւրին ծնողք պիտի վճարեն քսանեւվեցական օսմանեան ոսկի , կէ ու դպրոց մոտած օրերնին , կէսն ալ վեցերորդ ամսոյ վերջին օրը , եւ այնպէս հետզհետէ որչափ ատեն որ ուզեն իրենց զաւկները թողուլ վարժարանի մէջ :

Բ. Աշակերտաց կերակուրը , անկողինը , համազգեստը , լուացքը , կարկատը , ուսումնական գործեաց , գրոց . եւ թղթոց ծախքերը դպրոցը կհոգայ . իսկ սովորական հան դերձները եւ թէ' արձակուրդի թէ' ուրիշ դէպքերով երթեւեկութեան եւ թէ նամակներ եւ ուրիշ կարասիներ փոխադրելոյ ծախքերը ծնողք պիտի վճարեն .

Գ. Աշակերտ մը որ տարածական կամ անբուժելի ախտունի չընդունուիր , նոյնպէս դպրոցէն կճամբուի վերակացուաց կողմէն անյարմար դատուած աշակերտ մը .

Դ. Թոշակաւորք ընդհանուր տարին անդամ մը կրնան արձակուիլ յուշիս մէկէն մինչեւ օդոստոս մէկ :

## ՄԱՍՆԱԿԱԶԻՒՑ

ԱՇԱԿԵՐՏԱՅ ՀԱՄԱՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

### ՍԵՐՍԱՐԱՆ

Ա. Աշակերտք կպարտաւորին կարգաւ մտնել սերտարան եւ ամեն մէկն իւր տեղն երթալ ոռքի վրայ սպասել՝ որ ազօթքի նշան տրուի . նշան տրուելուն պէս միաձայնութեամբ եւ պարկեցտութեամբ երգերու են . Աւարտելուն պէս դարձեալ սպասել՝ որ նստելոյ նշան տրուի :

Բ. Նստելնուն պէս իւրաքանչիւրն իւր դասատետրին վըրայ որոշեալ դասը պատրաստելու պիտի պարապի :

Գ. Սերտարանին մէջ դիմացէ դիմաց խօսիլ , քովի ընկերին հետ խօսքի բռնուիլ , իրարու դիրք , թուղթ եւ ո՛ը և է բան մը նետել , թուղթ պատռել , դիրք եւ գործիք աղտոտել արգիլեալ է :

Դ. Սերտարանէն դուրս ելլելոյ համար աշակերտը տեսչին հրամանին պիտի սպասէ :

Ե. Սերտարանի մէջ պատուհան բանալ գոցել , ժամացուցի ձեռք դպրունել եւ ձմեռն ալ վառարանի մէջ փայտ դընել արգիլեալ է :

Զ. Աշակերտը ձեռքերը միշտ դրասեղանի վրայ դրած պիտի ըլլայ :

Է. Սերտարանէն դուրս դասարան կամ սեղանատուն կամ եկեղեցի կամ զբօսարան երթալու համար առաջին նշանը տրուելուն պէս կպատրաստուին , երկրորդին ոտքի վրայ կելչին , երրորդին դուրս կփալեն .

Ը. Սերտարանէն դուրս եկած տաեն դրասեղանին վրայ ոնաւ ու ենթ խամ ոռոգիք ու ոռուած ահան տունենաւ , առ բո-

Թ. Դասարան երթալու համար միայն հոն պէտք ըլլալիք գրքերը եւ գործիքները պիտի առնէ հետ :

Ժ. Գղրոցները բանալի պիտի չունենան, բայց մէկն իր ընկերին գղրոցին բնաւ ձեռք անդամ չպիտի դպյունէ :

ԺԱ. Սերտարանի մէջ գրասեղանը կտրտել, պատերը աղտոտել եւ այլն արգիլեալ է :

ԺԲ. Աշակերտը երբոր այս կանոններուն դէմ կգործէ սերտարանի մէջ՝ պատիժն անմիջապէս տեսուչը կտնօրինէ մէջ տեղն ոտքի վրայ կամ յանձանքին ծանրութեան չափով ծնկան վրայ կկեցունէ. այսափով չզգաստացողը սերտարանէն դուրս կմերժէ :



## Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Ա. Աշակերտները դասարան մտնելնուն պէս զդասատուն կրարեւեն, տեղերնին կերթան առանց իրար դաշելու, գլւրասեղանին վրայ կդնեն գրքերնին եւ այլն եւ կապասեն՝ որ նստելոյ նշանը տրուի :

Բ. Նստելնուն պէս անմիջապէս գրքերնին կամ տետրնին բանալով դասի պիտի պատրաստուին :

Գ. Դաս սկսելու նշանը տրուելուն պէս ամենքն ալ պիտի գացեն գրքերնին, եւ ձեռքերնին խաչաձեւ դնելով սեղանի վրայ կհային դէպ՚ի դասատուն :

Դ. Դասն ըսելու ատեն ոտքի վրայ պիտի կանդնին եւ ձեռքերնին սեղանատախակին վրայ դնեն :

Ե. Դասատուն կամ ընկեր մը գործողութեան տախտակին վրայ դասուն գործնականը ընելոյ ատեն ամենքն ալ հոն պիտի նային :

Զ. Վանահայրը երբոր կուգայ դասարան՝ աշակերտք ոտքի վրայ ելնելով անմիջապէս կապասեն նորա ողջունին, զար արուելուն պէս կընդունին եւ դասատուն նշան տալով կը նստին :

Է. Դասատունէն բնաւ գուրս ելնել ներելի չէ, որ եւ է պատճառակով :

պէս գրքերնին եւ գործիքնին կժողովեն, երկրորդ նշանին ոտքի վրայ կապասեն, երրորդ նշանին կարգաւ եւ դարձեալ առանց իրար դպչելու եւ ոտնաձայն հանելու սերտարան կերթան :

## Ս Ե Ղ Ա Ն Ա Տ Ո Ւ Ն

Ա. Սեղանատուն մտնելով իւրաքանչիւր աշակերտ իր տեղը կերթայ լուութեամբ եւ կապասէ ոտքով վերայ՝ որ աղօթքի եւ նստելոյ հրաման արուի :

Բ. Տրգալ, պատառաքաղ կամ դանակ, հայի կտոր, և յուր գետին նետել, հաց վասնել, ուտելու ատեն բերնին ձայնը հանել, սպասաւորին հետ բարձր ձայնով խօսիլ, ընկերին հետ խօսքի բռնուիլ եւ կարգացուած գրքին ուշադրութիւն շնել արգիլեալ է :

Գ. Բերնէն կերակուր հանել եւ գետին թափել արգիլեալ է. երբոր հարկը կբերէ՝ սկաւառակին վրայ դնելով սպասաւորին նշան տալու է որ վերցունէ :

Դ. Սպասաւորին բան մը հրամայելը նշանացի կըլլայ սեղանատան մէջ :

Ե. Կերակրոյ ատեն արմուկը սեղանատախտակին վրայ. մատները քիթը տանիլ, եղունգ խաւնել կամ կրծել, գրուխ քերել, ոտքերով շնկոց հանել եւ դուրսէն ուտելիք գնելով հոն բերել գաղտ ուտել արգիլեալ է :

Զ. Ուտելը լմննալուն պէս իւրաքանչիւր ոք իւր սորբիչը կծալէ եւ լուութեամբ կապասէ՝ որ աղօթքի ելելու նշան տրուի :

Է. Աղօթքն ըլլալէ յետոյ նշան տրուելուն պէս կարգով և առանց վազվազելու զբօսանքի կերթան :

Ը. Զբօսանքի երթալոյ ատեն գրպաննին կամ ձեռքերնին հաց կամ ո՛ր եւ է ուտելիք պիտի չունենան :

## Ն Ն Զ Ա Բ Ա Ն

Ա. Ննջարան մտնելու ատեն աշակերտը իր անկողնոյն քով կերթայ լուսթեամբ, հանդարտութեամբ զգեստաները կ՛անէ եւ կարգաւ որոշուած տեղին վրայ կզետեղէ եւ այնպէս թառալու զեւ ուր առաջնուն ու այսուն նայեա հայցեն, պահպան ազօթքը երգելով անկողին կմտնէ.

Բ. Բացարձակապէս արդիելեալ է շշուկ հանել, խօսիլ երդել քթին տակով, եւ ուտելիք բերել ննջարանի մէջ.

Գ. Գիշերը ո՞ր եւ է պատճառանքով ներելի չէ բնաւ պատուհան բանալ ու գոցել, ներելի չէ ընկերին մահճակալին ձեռք դպրունել. ներելի չէ ննջարանէն դուրս ելնել մըտնելու ատեն դռներու եւ ոտքերու ձայն բերել.

Դ. Ուռանց գիշերապահին գիտութեան ոչ ոք ննջարանէն դուրս կրնայ ելնել մտնել.

Ե. Գիշերապահի հետ խօսին ձած ձայնով կրնայ ըլլալ.

Զ. Աշակերտ մը երիկունը քուն չունենալ պատճառերով անկողնէն հեռու գտնուիլ, խօսքի կամ գործոյ պարապիլ չպիտի ընէ.

Է. Ուռաւօտուն առաջին նշանը տրուելուն պէս աշակերտ ները կպարտաւորին ելնել, յոդնակի երգել. Երբեմէ ժունին եւ ինչ ուշըն՝, զունի՛ք, ուր, յօդնել, զունի՛ շնչեռլու, զունի՛նաց նանին. պարկեշտութեամբ հագուիլ եւ անկողնոյն քով պապսել, որ լուսարան երթալոյ նշանը տրուի.

Թ. Հիւանդութիւն պատճառելով, չկրնար աշակերտը անկողին մնալ, այլ ելնելին յետոյ գիշերապահին կերթայ կը յայտնէ վիճակը եւ անոր հրամանովը վերստին անկողին կը մտնէ.

Ժ. Զգեստ փոխելն գիշերապահի հրամանաւ կըլլայ, ճեր մակեղէններն ամառն երկու անդամ շաբաթը, իսկ ձմեռն մէկ անդամ կըլլայ շաբաթը.

## Լ Ո Ւ Ս Տ Ա Ր Ա Ն

Ա. Հուացարան երթալը տեսչին որոշած թուովը եւ կարգաւը կըլլայ :

Բ. Աշակերտը լուսացարանի մէջ կատարեալ Պիւթագորեան մը է, ուր մաքրութեամբ լուսացուելին յետոյ կդառնայ դարձեալ իւր մահճակալին քով կսպասէ :

Գ. Նշան տրուելուն պէս ամենքն ալ ննջարանէն դուրս կուգան հանդարտութեամբ վարի սրահը կժողովին եւ կերպան յեկեղեցի :

Դ. Ննջարանէն մինչեւ յեկեղեցի երթալը Հայութակ Խոստակ Հենորհալոյն զօրաւոր ազօթքը պիտի լմնցունեն :

Ե. Ոտք եւ գլուխ լուանալը շաբաթը մէկ անդամ կըլլայ տեսչին հրամանաւ :

## Զ Բ Ո Ս Ա Ն :

Ա. Զբօսանքի ատեն իւրաքանչիւր աշակերտ անխստիր և անպատճառ պիտի զրանու . հրաման չէ որ մէկը դիրք առնու կարդայ կամ խօսքի բռնուի ընկերին հետ :

Բ. Զեռաց կատակ կամ իրարու ձեռք վերցունել բոլորովին արդիլեալ է :

Գ. Արգիլեալ է զբօսանքի մէջ ծառի քար նետել, ծառելել, պատի վրայ աղտոտութիւն ընել, եւ դպրոցին առջեւը քաշուած ցած պատին վրայէն վար ցաթկել.

Դ. Զբօսանքի խաղերն հոգաբարձուին հրամայածներէն պիտի ըլլայ, նոր խաղ մը տեսուչն անդամ չկրնար հրամայել :

Ե. Աշակերտները երկու երկու կամ երեք առ երեք քամ նուելով ընդհանուր խմբէն պիտի չիւռանան ընաւ :

Զ. Աշակերտ մը զբօսանաց տեղէն բացակայ չկրնար գլու-

Է. Բնական պէտքեր զբօսանքի առեն վճարուած պիտի  
ըլլան :

Ը. Առաջին նշանը արուելուն պէս յանկարծ ամենքն ալ  
պիտի ձգեն խաղելնին եւ աճապարանօք զետեղուին որո-  
շուած տեղը :

Թ. Երջադայութեան ելլելը միշտ հոդաբարձուին հրամա-  
նովը կըլլայ :

Ժ. Երջադայութեան գացած տեղերնին մրդաստան մըտ-  
նել, ծառ ելլել, առանց հրամանի ջուր խմել, գօտի քակել,  
ամեն ձեռք անցած բան ուտել արդիլեալ է :

ԺԱ. Շուն, ձի կամ ուրիշ կենդանի գրդուել, խրտուցա-  
նել կամ հաւերու և ժողովներու քար նետել՝ արդիլեալ է :

ԺԲ. Ընդհանրապէս ամեն տեղ արդիլեալ է աշակերտին  
ժխել :

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ա. Աշակերտն առանց իւր հոդաբարձուին գիտութեան  
եւ հրամանին այցելութիւն չկրնար ընդունիլ մէկէն :

Բ. Խօսարանի մէջ աշակերտին ծանօթի կամ ազգականի  
հետ գաղտ խօսակցիլը հոդաբարձուին տնօրինելովը կըլլայ :

Գ. Ո՞րեւ է նամակ կամ առանդ թէ՛ ստակ ըլլայ թէ՛ հան-  
դերձ եւ թէ՛ ուտելիք, որ կուդան ծանօթէ կամ ազգակա-  
նէ, առանց հաւանութեան հոդաբարձուին չկրնար ընդունիլ.

Դ. Աշակերտն այցելութիւն ընդունելէ յառաջ պէտք է  
մաքրուի, փոխուի, և սանտրուի և այնպէս այցելութիւն ըն-  
դունի :

Ե. Թոշակաւորաց արձակուրդը լմնալուն հետեւեալ օրը  
ամենքն ալ ամբողջ պիտի դտնուին վարժարանի մէջ :

## Թ. Վ. ԱԿՑՈՒԹԻՒՆ

Ա. Աշակերտը նամակ չկրնար դրկել առանց հրամանի հո-  
գաբարձուին, ինչպէս նաեւ դրսէն եկած նամակ առանց  
հոդաբարձուին բանալուն չկրնար կարդալ :

Բ. Ապասաւորի նամակ չկրնար յանձնել եւ ոչ ալ անոր  
ձեռքէն ընդունիլ :

Գ. Աշակերտք պարտաւոր են գլխաւոր եւ տօն օրերուն  
իրենց ծնողաց կամ խնամակալաց չնորհաւորութեան դիր  
գրել :

## ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԹԻՒՆՎ

Ա. Ամէն ժամերգութեան պահուն ներկայ պիտի դտնու-  
ին բոլոր աշակերտք :

Բ. Տարւոյն հինգ գլխաւոր տօներուն հարկաւորապէս  
բուրբ չաղորդութեան պիտի մերձենան :

Գ. Ամէն կիրակէ առաւօտ սերտարանի մէջ ժամու մը  
շափ հաւաքուած պիտի ըլլան, ուր աւուր սուրբ Աւետա-  
րանը կրացատրէ կրօնադիտութեան դասատուն կամ հոդա-  
բարձուն կամ անոր որոշած մէկ վարդապետը, եթէ նոյն կի-  
րակէ եկեղեցւոյ մէջ քարոզիլը չէ բացատրած. իսկ եթէ բա-  
ցատրած է, սուրբ գիրք կամ սուրբ գրոց մեկնութիւն պիտի  
կարդացուի :

Դ. Կիրակօրեայ զբօսանքը՝ կամ շրջադայութիւնը միշտ  
այս պարտաւորութիւնը կատարելէն իտքը պիտի ըլլայ :

Ե. Պէտք ունեցած ատեննին որոշուած խոստվանահօր  
հետ կրնան տեսնուիլ եկեղեցւոյ մէջ չկրօնական խոստվանու-  
թեան առարկայ եղած նիւթերու վրայ :



# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՆՈՆԻ ՊԱՇՏՈՆԻՒԹՅ ՎԱՐԺԱՐԱԿԱՆԻՆ

## ՀՈԳԱՅԻԱՌՉՈՒԻ

Ա. Հոգաբարձուն դպրոցին գլխաւոր պաշտօնեալին է՝ բոլոր  
պաշտօնէից վերադիտողը և ամսական վարձքերնին տուողը :

Բ. Հոգաբարձուն նիւթական մատակարարութեան ելից

և մոից հաշիւը պիտի տայ Տնօրէն ժողովոյ տարին անդամ մը :

Գ. Դպրոցին կանոնայ վրայ հաւելուած կընէ կամ կփոփուէ հաւանութեամբ վանահօր :

Դ. Տեսչին և դասատուաց ու գիշերապահին կողմանէ տըշայոց բարուց և գործոց վրայ եղած դիտողութիւնք պիտի ընդունի, և վարձ կամ պատիժ աշակերտին պիտի տնօրինէ :

Ե. Վարժարանէն մերժուելու աշակերտին վրայ վանահօր

տեղեկութիւն տալէ յետոյ կմերժէ :

Զ. Նոր խաղու հրամանը ինք պիտի տայ, ինք պիտի հրամայէ նաեւ հեռուն զրուանքի երթալու համար :

Է. Աշակերտայ զրկած կամ դրսէն առած նամակները յառաջուց աչքէ պիտի անցունէ :

Ը. Դպրոցի պաշտօնէից վրայ լեազօր իշխանութիւն ունի :

Թ. Ամէն ամիս օրադրութիւնը աչքէ պիտի անցունէ և բարուց մէջ 90 թուոյն, իսկ դասերուն մէջ որոշեալ թուոյն համեմատ պատւոյ գիր պարզեւէ աշակերտաց :

Ժ. Քննութեան օրերը վրայ գալէ յառաջ դասատուաց և վանահօր կյայտնէ, և քննութիւն եղած օրը բոլոր միաբանութիւնը կհրաւիրէ :

# ԴԱՍԱՑՈՒՔ

Ա. Խւրաքանչիւր դասատու դասատուութեան ժամէն դունէ 3 վայրկեան յառաջ իր յատկացեալ դասարանը գըանուի :

Բ. Ամեն դասու վերջը հետեւեալ դասու բացատրութիւնն ընէ հարկաւ :

Գ. Դասատուն պէտք է նշանակէ աշակերտաց իրենց դասը զուրցելուն աստիճանը հետեւեալ կերպով :

Քաջ 3

Լաւ 2

Միջակ 1

Վատ 0

Դ. Դասատուն՝ երբոր աշակերտը դասը բնաւ չդիմնար շորագրին մէջ մասնաւոր դիպուածոց կարգը անցունէ ։ Նոյն պէս պիտի ընէ՝ երբոր վարուց կողմանէ մասնաւոր նշանակութեան հարկ կենայ :

Ե. Խւրաքանչիւր դասատու իր դասերը ամսական բաշխումի պիտի վերածէ գործածելիք դասադրքերուն վրայ՝ զորս հոգաբարձուն ձեռքը կուտայ, եւ պիտի վաւերացունել տայ ուստամնական խորհրդոյն :

Զ. Բնաւ ներելի չէ դասատուաց մոերմութիւն ունենալ աշակերտի մը հետ ո՞ր եւ է պատճառանքով :

Է. Խւրաքանչիւր աւուր դասուն պէտք է դասատուն դործն աւարտէ յորոշեալ ժամուն եւ դասարանէն արձակուելու նշան տայ աշակերտաց :

Ծ. Բացարձակապէս արգիլեալ է դասատուաց ծխել կամ ուանել բան մը դասարանի մէջ :

## ՏԵՍՈՒԻՉ

Ա. Տեսուչը թէ՛ սերտարանի թէ՛ սեղանատան և զրոսանաց և շրջադայութեան ատեն անբաժանելի ըլլայ յաշակերտաց :

Բ. Իւր անմէկին եղած այս տեղերու բոլոր կանոնաց հըսկողութիւնը իրեն պարտքն է, զանցառութիւնը պատասխանատու կընէ զինքը :

Գ. Սերտարանէն, սեղանատունէն, զրոսավայրէն, գասարաններէն դուրս ելելու մտնելու արձակումները իւր նըշան տալուն վերապահեալ են :

Դ. Բարի վարուց նշանակէտներն, որ են

Քաջ	3
Հաւ	2
Միջակ	1
Վատ	0

տեսուչը կնշանակէ, ինչպէս նաեւ բարի վարուց դէմպատահած մասնաւոր դիպուածներն:

Ե. Աշակերտին կծու խօսք զուրցել ներելի չէ տեսչին ինչպէս նաեւ ապտակել ընդհակառակն միշտ քաղցը և համբոյը պիտի ըլլայ խօսքը եւ վարմունքը :

Զ. Տեսչին արգիլեալ է դիշեր ատեն ննջարան մտնել աշակերտի մը հետ տեսակցիլ .

Է. Բացարձակապէս արգիլեալ է ծկել սերտարանի մէջ :

Ը. Գիշերապահը ձայն տուածին պէս պիտի ելլէ եւ վաղարոյց զանդակը զարնէ յորոշեալ ժամանակին պատրաստութիւն ընել տայ եւ եկեղեցի տանի :

Թ. Արգիլեալ է աշակերտաց մէջ գաղտ կամ յայտնի լըլտեսներ կարգել .

Ժ. Աշակերտաց ճնողքներէն եկած և աշակերտներէն առնոսա զրկած թղթակցութիւնները հոգաբարձուին պիտի մատուցանէ :

ԺԱ. Տեսուչը ամեն երեկոյ դասատուաց օրագիրը աչքէ անցունէ և մասնաւոր դիպուածոց հետ հոգաբարձուին ներկայացունէ :

## Գ. Ի Շ Ե Ր Ա Պ Ա Հ

Ա. Գիշերապահը պէտք է ուշադիր ըլլայ՝ որ երկու աշակերտ միանդամայն դուրս չցորիէ :

Բ. Պէտք է հսկէ բոլոր գիշերը եւ պէտք չէ դուրս ելլել կամ ժուռ դալ . կընայ ննջարանին մէջ շրջել առանց ոտնաձայնի :

Գ. Ողջոյն գիշերը լապտերը վառ պիտի պահէ :

Դ. Ամառն չըրեցարթի եւ շաբաթ, ձմեռը միայն շաբաթ իրիկուններ հարկաւորապէս ճերմակեղինները փոխել պիտի տայ աշակերտաց :

Ե. Եկեղեցւոյ կոչնակէն կէս ժամ յառաջ պէտք է տեսուն արթնցունէ :

## ՍՊԱՍՈՒԻՐՔ

Ա. Սպասաւորը ամեն առաւօտ ամառն եւ ձմեռն պէտք է աշակերտներէն առաջ արթննայ եւ լոյսերը եւ վառարանը պատրաստէ, նախ քան աշակերտաց սերտարան մտնելը :

Բ. Աշակերտաց յեկեղեցի գանուած ատենները պիտի յարդարէ անկողինները, սրանները մաքրէ, եւ նախաճաշը պատրաստէ :

Գ. Զմեռ. ատեն կրակարանի բոլոր փայտերը պատրաստ պիտի ունենայ :

Դ. Զմեռները չկրնար մտնել սերտարան աշակերտաց ներկայութեան կրակարան վառելու համար, բայց միայն որոշեալ ժամերուն :

Ե. Սպասաւորին պարտն է զդուշանալ՝ որ ոչ ոք բաց ՚ի վանահօրէն, սերտարան եւ դասարան մտնէ . այսպիսի պարագայներու մէջ պէտք է անմիջապէս տեսչին իմաց տալ .

Զ. Զմեռ. եւ եկեղեցի նախ պատրաստ ամեն արթաւուած, միանալ

պատրաստէ եւ անյապաղ՝ պատրաստ ըլլան իմացունէ :

Է. Սեղանոյ կահկարասիքն , ինչպէս նաեւ ամեն իրենց ժառայութեան նիւթ եղած բաներ մաքուր պահէ :

Ը. Իրիկուան կերակուրը բերելու համար պէտք է սպասէ՝ որ աշակերտք եկեղեցին ելլեն .

Թ. Ապասաւոր մը չպիտի ունենայ ո՛ր եւ է յարաբերութիւն աշակերտաց հետ . Նոյնպէս աշակերտաց կողմէն ո՛չնամակ պիտի առնու տեղ մը տանելու կամ զրկելու . Եւ ոչ դըրմէն եկած նամակ կամ աւանդ յանձնէ աշակերտաց , այլ պէտք է տեսչին յանձնէ :

Ժ. Ուր որ ջուր կարեւոր է՝ պէտք է պատրաստ գտնուի և ամեն շաբաթ՝ օրեր ոտք և գլուխ լուալոյ ջուր պատրաստէ :



ԱՐԵՐՈՅ

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL044978

